ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԶԱՎԵՆԻ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԻԲ.00.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ **Անտոնյան Միրա Ավանեսի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Զասլավսկայա Մարիա Իգորի**
	Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու **Գալստյան Մարինա Կարենի**
Առաջատար կազմակերպություն՝	**Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը՝ 13:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ Աբովյան փ. 52 ա, ք. Երևան, 0025, ՀՀ, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝

Ղարագուլյան Արման Լիպարիտի

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում երեխաների ընտանեկան խնամքից զրկման հիմնախնդիրը երեխաների պաշտպանության ոլորտի առանցքային մարտահրավերներից է՝ անկախ խնամքի և պաշտպանության համակարգերի բազմազանությունից տարբեր պատմական ժամանակաշրջաններում: Վերջին տասնամյակների ընթացքում երեխաների զարգացման, բարեկեցության և իրավունքների վերաբերյալ իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ նույնիսկ առավել բարենպաստ պայմաններում գործող ինստիտուցիոնալ խնամքի համակարգերը չեն կարող լիարժեք փոխարինել ընտանիքում ձևավորվող սոցիալական միջավայրը: Ընտանիքը երեխայի համար ապահովում է ոչ միայն ֆիզիկական խնամք, այլև կայուն սոցիալական կապեր, վստահության հարաբերություններ, պատկանելիության զգացում և սոցիալականացման կայուն շարունակականություն, որոնք հիմնարար նշանակություն ունեն նրա զարգացման և բարեկեցության համար: Այս հանգամանքը պայմանավորել է ընտանեկան խնամքից զրկված երեխաների խնդիրներին արձագանքման պարադիգմի վերանայման անհրաժեշտություն, որն արտացոլվել է երեխաների պաշտպանության համակարգերի զարգացման գործընթացներում և ոլորտային հետազոտությունների մեջ:

Նշված գիտական և գործնական վերաիմաստավորման արդյունքում երեխաների պաշտպանության ժամանակակից քաղաքականություններում աստիճանաբար ամրապնդվել է ընտանիքահեն խնամքի գերակայության սկզբունքը: Միջազգային իրավական փաստաթղթերը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (United Nations, 1989) և Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցները (United Nations General Assembly, 2010), երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից առաջնահերթ են համարում երեխայի դաստիարակությունը ընտանիքում կամ ընտանիքին հնարավորինս մոտ միջավայրում՝ ինստիտուցիոնալ պայմաններում խնամքը դիտարկելով որպես բացառիկ, ժամանակավոր և այլ այլընտրանքներ չունենալու դեպքում կիրառվող լուծում:

Նման մոտեցումը, պայմանավորված է նաև ոլորտում առկա հետազոտությունների արդյունքներով, որոնց նշանակալի մասը կենտրոնացած է խնամազրկության սոցիալ-տնտեսական նախադրյալների կամ երեխաների պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմների և դրանց հետևանքների ուսումնասիրության վրա (Burnstein, 1981; Carson, 1987; Kadushin, 1974; Runyan et al.,

1998; Pearson & Oyebode, 2009; Antonyan, 2021): Այնուամենայնիվ, համեմատաբար սահմանափակ են այն ուսումնասիրությունները, որոնք խնամազրկությունը դիտարկում են որպես սոցիալական գործընթաց և, ըստ այդմ, վերլուծության ենթարկում երեխայի համար նշանակալի սոցիալական հարաբերությունների աստիճանական թուլացման, խաթարման, քայքայման և խզման մեխանիզմները:

Մասնավորապես, սոցիալական կապիտալի տեսության շրջանակում կատարված ուսումնասիրությունները (Bourdieu, 1986; Coleman, 1988; Putnam, 2000) ցույց են տվել, որ սոցիալական կապերը, վստահությունը, փոխադարձության նորմերը և սոցիալական աջակցության համակարգերը կարևոր նշանակություն ունեն անհատի սոցիալական ինտեգրման, բարեկեցության և զարգացման համար: Սակայն երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացում սոցիալական կապիտալի դերի ուսումնասիրությունը շարունակում է մնալ համեմատաբար թերի մշակված ուղղություն. խորքային ուսումնասիրման կարիք ունի այս հարցում, թե ինչպես են ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի փոփոխությունները պայմանավորում խնամազրկության ձևավորումն ու հետագա վերարտադրությունը:

2000-ական թվականներից սկսած Հայաստանի հանրապետությունում ևս իրականացվում են երեխաների խնամքի ապաինստիտուցիոնալացման և երեխաների պաշտպանության համակարգի լավարկմանն ուղղված լայնածավալ բարեփոխումներ, որոնց արդյունքում պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից են դարձել ընտանիքների հզորացումը, ընտանիքահեն այլընտրանքային խնամքի տարբերակների զարգացումը և երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի ապահովումը: Այս գործընթացները նոր պահանջներ են առաջադրում երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի ուսումնասիրությունը կարևորելով ոչ միայն դրա հետևանքների, այլև ձևավորման սոցիալական մեխանիզմների բացահայտումը:

Երեխաների ընտանեկան խնամքից զրկման ուսումնասիրությունը՝ որպես սոցիալական կապերի և սոցիալական կապիտալի փոխակերպման գործընթաց, նպատակ ունի լրացնել առկա գիտական բացը, քանի որ գործող հետազոտությունների մեծ մասը խնամազրկությունը մեկնաբանում է որպես իրավական կարգավիճակ կամ սոցիալական հետևանք: Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել խնամազրկության ձևավորման սոցիալական մեխանիզմները, խորացնել դրա սոցիոլոգիական մեկնաբանությունը և ձևավորել գիտական հիմքեր երեխաների պաշտպանության ոլորտում ի հայտ եկող տարատեսակ սոցիալական ռիսկերի կանխարգելման և վաղ միջամտության համար:

Սույն ատենախոսության հետազոտական **օբյեկտը** ՀՀ-ում ընտանեկան խնամքից զրկված երեխաներն են, իսկ **առարկան՝** երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի ձևավորման, զարգացման և վերարտադրման գործընթացներում սոցիալական կապիտալի դերն ու դրսևորումները:

Ատենախոսության **նպատակն** է՝ սոցիոլոգիական տեսանկյունից վերլուծել հայաստանյան հասարակության պայմաններում երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացը՝ բացահայտելով ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի դերը խնամազրկության ձևավորման, զարգացման և վերարտադրման մեխանիզմներում:

Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ հիմնական **խնդիրները**.

Տեսական խնդիրներ

- Վերլուծել մանկության սոցիոլոգիայի, երեխաների խնամքի և խնամազրկության, ինչպես նաև սոցիալական կապիտալի վերաբերյալ տեսական մոտեցումները՝ գնահատելով դրանց կիրառելիությունը երեխաների խնամազրկության (ընտանեկան խնամքից զրկման) ուսումնասիրման համատեքստում:
- Վերլուծել երեխաների խնամազրկության գործընթացում սոցիալական կապերի և սոցիալական կապիտալի փոփոխությունները՝ որպես խնամազրկման ձևավորման հնարավոր մեխանիզմներ:
- Բացահայտել ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապերի դերը երեխայի խնամքի, պաշտպանության և սոցիալական ինտեգրման գործընթացներում:
- Վերլուծել երեխայի սոցիալական սուբյեկտության դրսևորումները և դրանց փոխկապակցվածությունը սոցիալական կապիտալի վերարտադրության գործընթացների հետ:

Էմպիրիկ և կիրառական խնդիրներ

- Բացահայտել ընտանեկան խնամքից զրկման գործընթացի ձևավորման հիմնական սոցիալական մեխանիզմները և պատճառահետևանքային շղթաները:
- Ուսումնասիրել սոցիալական կապիտալի տարբեր տեսակների և խնամազրկության գործընթացային բնութագրիչների միջև առկա կապերը.
    - Ուսումնասիրել ընտանեկան սոցիալական կապիտալի և երեխաների խնամազրկության գործընթացային բնութագրիչների միջև առկա կապերը:

- Ուսումնասիրել համայնքային սոցիալական կապիտալի և երեխաների խնամազրկության գործընթացային բնութագրիչների միջև առկա կապերը:
- Ուսումնասիրել երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի և երեխաների խնամազրկության գործընթացային բնութագրիչների միջև առկա կապերը:

• Վերլուծել երեխա–ընտանիք և երեխա–խնամող սոցիալական կապերի խաթարման դրսևորումները երեխաների խնամազրկության տարբեր հիմքերի համատեքստում:

• Վերլուծել երեխա–ընտանիք և երեխա–խնամող սոցիալական կապերի խաթարման դրսևորումները երեխաների խնամազրկության տարբեր բնույթների համատեքստում:

• Պարզել խնամազրկության պայմաններում երեխաների կողմից ձևավորվող փոխարինող սոցիալական կապերի և ադապտիվ ռազմավարությունների առանձնահատկությունները:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը

Երեխաների խնամքի, խնամազրկության և երեխաների պաշտպանության հիմնախնդիրները լայնորեն ուսումնասիրվել են սոցիոլոգիայի, սոցիալական աշխատանքի, հոգեբանության, իրավագիտության, մանկավարժության և հանրային քաղաքականության շրջանակներում, սակայն դրանց մեկնաբանությունները ձևավորվել են տարբեր տեսամեթոդաբանական ավանդույթների հիման վրա՝ կենտրոնանալով երևույթի առանձին կողմերի վրա:

Մանկության սոցիոլոգիայի շրջանակում իրականացված ուսումնասիրությունները (James & Prout, 2015; Jenks, 2020; Corsaro, 2018) կարևորել են երեխայի սուբյեկտությունը, սոցիալական մասնակցությունը և սոցիալական հարաբերությունների դերը երեխայի կենսափորձի ձևավորման գործընթացում: Այս մոտեցումները հնարավորություն են տվել երեխային դիտարկել ոչ միայն որպես խնամքի և սոցիալականացման օբյեկտ, այլև որպես սոցիալական հարաբերությունների ակտիվ մասնակից (Wood և ուրիշներ, 2011):

Խնամքի և խնամազրկության վերաբերյալ ուսումնասիրությունները ձևավորվել են տարբեր տեսական ավանդույթների շրջանակում՝ ներառելով պատմական, սոցիոլոգիական, հոգեբանական և երեխաների պաշտպանությանն ուղղված մոտեցումներ (Burnstein, 1981): Հետագա հետազոտությունները հիմնականում զարգացել են կապվածության տեսության (Bowlby, 1982), խնամքի էթիկայի (Tronto, 1993), երեխայի զարգացման և կրթության հոգեբանության (Piaget,

1952; Kohlberg, 1981; Cooley, 1902; Vygotsky, 1978), ինչպես նաև սոցիալական վերահսկողության և ինստիտուցիոնալ միջամտությունների քննադատական վերլուծությունների (Foucault, 1977) շրջանակում: Նշված հեղինակները կարևորել են վաղ տարիքում խնամողների հետ հարաբերությունների, հուզական անվտանգության, արձագանքող խնամքի և երեխայի զարգացման համար պահանջվող սոցիալական միջավայրի նշանակությունը:

Միաժամանակ խնամազրկության պատճառների և հետևանքների վերաբերյալ հետազոտությունների զգալի մասը (Pearson & Oyebode, 2009; Narayan և ուրիշներ, 2021) կենտրոնացած է հաստատություններում խնամքի հետևանքների, սոցիալական որբության, ընտանեկան բռնության, աղքատության, սոցիալական մեկուսացման և երեխաների բարեկեցության խնդիրների ուսումնասիրության վրա:

Սոցիալական կապիտալի տեսության շրջանակում Բուրդյեի (1986), Քոլմանի (1988) և Փաթնամի (2000) աշխատանքները ցույց են տվել, որ վստահության, փոխադարձության և սոցիալական կապերի համակարգերը կարևոր դեր են կատարում սոցիալական ինտեգրման, սոցիալական աջակցության և սոցիալական վերահսկողության գործընթացներում: Հետագա ուսումնասիրություններում սոցիալական կապիտալի հայեցակարգը կիրառվել է կրթության, աղքատության, առողջության, համայնքային զարգացման և սոցիալական անհավասարությունների ուսումնասիրման համատեքստում (Behtoui & Neergaard, 2016; Janssens, Van de Gaag & Gunning, 2004; Shan et al., 2014; Woolcock, 1998; Portes, 1998): Սակայն երեխաների խնամազրկության գործընթացում սոցիալական կապիտալի դերը շարունակում է մնալ համեմատաբար քիչ ուսումնասիրված ուղղություն, հատկապես այն հարցի տեսանկյունից, թե ինչպես են ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի փոփոխությունները ներգրավվում խնամազրկության ձևավորման և զարգացման գործընթացներում:

Հայաստանյան գիտական գրականությունում առավել հաճախ ուսումնասիրվել են երեխաների պաշտպանության համակարգի զարգացման, խնամքի հաստատությունների ապաինստիտուտավորման, ընտանեկան բռնության, երեխաների խոցելիության և իրավունքների պաշտպանության հարցերը (Անտոնյան, 2004; Իսկանդարյան, 2014): Վերջին տարիներին իրականացվել են նաև առանձին կիրառական բնույթի ուսումնասիրություններ՝ նվիրված այլընտրանքային խնամքի համակարգերի, ընտանիքների ամրապնդմանն ուղղված միջամտությունների և երեխաների պաշտպանության քաղաքականությունների զարգացմանը: Սակայն դրանց զգալի մասը կրում է կիրառական բնույթ և համեմատաբար սահմանափակ ուշադրություն է դարձնում հարցի տեսական-մեթոդաբանական կողմին:

Այսպիսով, առկա տեսական և գործնական ուսումնասիրությունները կարևոր հիմք են ստեղծում երեխաների խնամազրկության մեկնաբանության համար, սակայն շարունակում է պահպանվել գիտական բացը՝ կապված խնամազրկության գործընթացային բնույթի, սոցիալական կապիտալի տարբեր ձևերի, երեխայի սուբյեկտության և ընտանեկան խնամքից զրկման սոցիալական մեխանիզմների համակցված ուսումնասիրման հետ: Հենց այդ բացի լրացմանն է ուղղված սույն հետազոտությունը՝ ելակետում ունենալով սոցիալական կապիտալի տեսությունը և մանկության սոցիոլոգիայի շրջանակում ձևավորված տեսական մոտեցումները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել է հիմնարար տեսության կոնստրուկտիվիստական տարբերակը (Charmaz, 2006), որը հնարավորություն է տվել տեսական ընդհանրացումները ձևավորել էմպիրիկ տվյալների վերլուծության հիման վրա և բացահայտել խնամազրկության ձևավորման հիմքում ընկած սոցիալական մեխանիզմները:

Հետազոտական ռազմավարությունը կառուցվել է դեպքերի ուսումնասիրության մեթոդաբանության շրջանակում (Թադևոսյան, 2006), ինչը հնարավորություն է տվել ընտանեկան խնամքից զրկման երևույթը ուսումնասիրել իր բնական սոցիալական համատեքստում, բացահայտել դրա բազմագործոն բնույթը և վերլուծել սոցիալական կապիտալի տարբեր ձևերի դերակատարությունը խնամազրկության ձևավորման և վերարտադրության գործընթացներում:

Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների հաջորդական համադրման սկզբունքով: Առաջին փուլում իրականացվել է որակական տվյալների հավաքագրում և վերլուծություն, որի արդյունքների հիման վրա ձևավորվել են հետագա քանակական վերլուծության հիմնական վերլուծական կատեգորիաներն ու փոփոխականները:

Հետազոտության էմպիրիկ հիմքը կազմել են Հայ օգնության ֆոնդի «Մարդիգյան երեխաների պաշտպանության կենտրոնի» արխիվային նյութերը, առանցքային տեղեկատուների հետ կիսակառուցվածքային հարցազրույցները և ընտանեկան խնամքից զրկված երեխաների հետ իրականացված ազատ հարցազրույցները: Որակական փուլի շրջանակում ուսումնասիրվել են 239 դեպքեր (321 երեխա), իրականացվել են 10 առանցքային տեղեկատուների և 30 երեխաների հետ հարցազրույցներ: Քանակական վերլուծության համար (իրականացվել է JASP ծրագրային ապահովմամբ) ձևավորվել է 153 դեպք և 246 երեխա ներառող տվյալների բազա, հիմնված որակական տվյալների բազայի վրա:

Տվյալների որակական վերլուծության ընթացքում կիրառվել են բաց, առանցքային և ընտրողական կոդավորման ընթացակարգեր (Charmaz, 2006), որոնց հիման վրա ձևավորվել են հետազոտության հիմնական վերլուծական կատեգորիաները: Քանակական տվյալների մշակման ընթացքում կիրառվել են նկարագրական վիճակագրության, χ^2 (Chi-Square) անկախության թեստի, Cramer's V գործակցի, միակողմանի դիսպերսիոն վերլուծության (ANOVA) և Kruskal–Wallis ոչ պարամետրիկ թեստի մեթոդները:

Հետազոտության հիմնական սահմանափակումները պայմանավորված են ընտրանքի նպատակային բնույթով և էմպիրիկ բազայի առանձնահատկություններով: Ուսումնասիրությունն իրականացվել է երեխաների պաշտպանության համակարգում, մասնավորապես, մեկ ճգնաժամային կենտրոնում, հայտնված դեպքերի հիման վրա, ուստի դրա արդյունքները միտված են խնամազրկության սոցիալական գործընթացների և մեխանիզմների բացահայտմանը՝ առանց Հայաստանի երեխա բնակչության վերաբերյալ վիճակագրական ընդհանրացումներին:

Ընտրված հետազոտական ռազմավարությունը, այդ թվում մեթոդների համադրումը, համահունչ է հետազոտության նպատակին և հնարավորություն է տալիս խնամազրկությունը դիտարկել որպես գործընթացային երևույթ, բացահայտել խնամազրկության ձևավորման սոցիալական մեխանիզմները, որոշակիացնել դրա պատճառահետևանքային շղթաները և վերլուծել սոցիալական կապիտալի դերը գործընթացի տարբեր փուլերում: Նման մոտեցման հիմնական առավելությունը խնամազրկության ներքին տրամաբանության և դրա հիմքում ընկած սոցիալական գործընթացների խորքային ուսումնասիրման հնարավորությունն է:

Հետազոտության վարկածները

Հետազոտության **գլխավոր վարկածն է՝** երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացը պայմանավորված է ոչ միայն խնամողի ֆիզիկական բացակայությամբ կամ առանձին սոցիալական ռիսկերով, այլև ընտանեկան և համայնքային սոցիալական կապիտալի թուլացմամբ:

Այս համատեքստում ընտանեկան սոցիալական կապիտալը հանդես է գալիս որպես առանցքային միջնորդող մեխանիզմ, որի միջոցով սոցիալական ռիսկերը ներգործում են երեխայի խնամքի և բարեկեցության վրա:

Վարկածները՝

- Երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացը փոխկապակցված է ընտանեկան և համայնքային սոցիալական կապիտալի բնույթի

հետ: Սոցիալական կապիտալի բարձր մակարդակները կապված են երեխայի խնամքի և պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմների, իսկ դրա թուլացումը՝ խնամազրկության ռիսկի բարձրացման հետ:

- Խնամազրկությունը ձևավորվում է ծնողի կամ խնամողի ոչ միայն ֆիզիկական բացակայության, այլ նաև հուզական ներգրավվածության, փոխադարձ վստահության և հարաբերությունների շարունակականության աստիճանական թուլացման պայմաններում՝ ձևավորելով խնամազրկության լատենտ ձևեր:
- Խնամազրկության գործընթացում սոցիալական ռիսկերի կուտակումը և դրանց համակցված ազդեցությունը փոխկապակցված են ընտանեկան սոցիալական կապիտալի թուլացման հետ:
- Երեխաների կողմից ձևավորվող փոխարինող սոցիալական կապերը և ադապտացիոն ռազմավարությունները կարող են մասնակիորեն փոխհատուցել ընտանեկան սոցիալական կապիտալի պակասը, սակայն չեն կարող լիարժեք փոխարինել դրա գործառույթները:

Ատենախոսության գիտական նորույթները

Ատենախոսության գիտական նորույթները հետևյալն են.

1) Առաջին անգամ առաջադրվել և հիմնավորվել է երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի սոցիոլոգիական մեկնաբանության հայեցակարգ, որի շրջանակում խնամազրկությունը դիտարկվում է ոչ թե որպես բացառապես իրավական կարգավիճակ կամ մեկանգամյա իրադարձություն, այլ որպես սոցիալական կապիտալի դինամիկան արտացոլող գործընթաց:

2) Մշակվել և տեսականորեն հիմնավորվել է խնամազրկության գործընթացային մեկնաբանությունը՝ տարբերակելով «խնամազրկություն» հասկացությունը որպես սոցիալական գործընթաց և «ընտանեկան խնամքից զրկված երեխա» հասկացությունը որպես այդ գործընթացի հնարավոր արդյունք և սոցիալական կարգավիճակ:

3) Առաջարկվել է երեխաների խնամազրկության դասակարգման մոդել, որում սահմանվել են դրա բացահայտ, լատենտ, քրոնիկ, ընտրողական, ինչպես նաև նորմատիվորեն լեգիտիմացված և ինստիտուցիոնալ ձևերը:

4) Գիտական շրջանառության մեջ են ներմուծվել «անտեսանելի ծնող», «դե ֆակտո խնամազրկություն» և «միջանցքում հայտնված երեխաներ» հասկացությունները՝ խնամազրկության այն ձևերի նկարագրման համար, որոնք ամբողջությամբ չեն արտացոլվում գործող իրավական և վարչական դասակարգումներում:

5) Առաջադրվել և հիմնավորվել է ընտանիքի հարաբերություններում խնամքի իրականացման կառուցվածքային առկայության և գործառութային բացակայության

պարադոքսը, որը բնութագրում է այն իրավիճակները, երբ ծնողը ֆորմալ կերպով պահպանում է իր դերը, սակայն չի իրականացնում երեխայի խնամքի, պաշտպանության, հուզական աջակցության և սոցիալականացման հիմնական գործառույթներ, ինչը ձևավորում է լատենտ խնամազրկության դրսևորումները:

6) Մշակվել է խնամող–խնամվող հարաբերությունների գործընթացային դինամիկան նկարագրող մոդել, որը ներառում է սոցիալական կապերի թուլացման, խաթարման, քայքայման և խզման փուլերը՝ որպես խնամազրկության ձևավորման փոխկապակցված աստիճաններ: Առաջարկվել է այդ աստիճանների հայեցակարգային տարբերակումը:

7) Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել է ընտանեկան սոցիալական կապիտալի միջնորդող դերը երեխաների խնամազրկության գործընթացում՝ ցույց տալով, որ սոցիալական ռիսկերի ազդեցությունը հաճախ իրականացվում է ընտանեկան հարաբերությունների փոփոխության միջոցով:

8) Էմպիրիկ ուսումնասիրությամբ հիմնավորվել են ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի, սոցիալական ռիսկերի կուտակման և երեխաների խնամազրկության հիմքերի, բնույթի ու գործընթացային ուղիների միջև առկա կապերը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. **Երեխաների՝ ընտանեկան խնամքից զրկումը նպատակահարմար է մեկնաբանել որպես սոցիալական գործընթաց**՝ որպես միայն իրավական կարգավիճակ կամ սոցիալական հետևանք դիտարկելու փոխարեն: Որպես գործընթաց, այն ձևավորվում է ժամանակի ընթացքում և արտացոլում երեխայի համար նշանակալի սոցիալական հարաբերություններում փոփոխությունների դինամիկան:

2. **Խնամազրկության գործընթացը զարգանում է սոցիալական կապերի թուլացման, խաթարման, քայքայման և խզման փոխկապակցված փուլերով**, որոնք նկարագրում են խնամող–խնամվող հարաբերությունների գործընթացային դինամիկան և հնարավորություն տալիս բացահայտել խնամազրկության վաղ դրսևորումները:

3. **Ընտանեկան սոցիալական կապիտալը երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացում հանդես է գալիս որպես առանցքային միջնորդող մեխանիզմ**, որի միջոցով սոցիալական ռիսկերը ներգործում են երեխայի խնամքի և բարեկեցությանը կառուցողական կամ հակառակը՝ ապակառուցողական չափումների վրա:

4. **Սոցիալական կապիտալի տարբեր տեսակները (ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող) ուղեկցումը են խնամազրկության գործընթացային ուղիները, որոնք** պայմանավորում են ընտանեկան խնամքից զրկման ձևաչափերը:

5. **Խնամազրկության ձևաչափերում առկա են այնպիսի դրսևորումներ, որոնք ամբողջությամբ չեն արտացոլվում գործող իրավական և վարչական դասակարգումներում**, մասնավորապես՝ դե ֆակտո խնամազրկությունը, «անտեսանելի ծնողության» դրսևորումները և «միջանցքում հայտնված երեխաների» իրավիճակները:

6. **Խնամազրկության պայմաններում երեխաների կողմից ձևավորվող փոխարինող սոցիալական կապերը և ադապտիվ ռազմավարությունները կարող են մասնակիորեն փոխհատուցել ընտանեկան սոցիալական կապիտալի պակասը**, սակայն չեն կարող լիարժեք փոխարինել դրա գործառույթները:

7. **Երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի երևույթի կանխարգելման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն առանձին սոցիալական ռիսկերի** (աղքատության, անօթևանության, առողջական խնդիրներ, գործազրկության և այլն) **նվազեցմամբ, այլև ընտանեկան, համայնքային և երեխայի սոցիալական կապիտալի պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված միջամտություններով**:

Ատենախոսության տեսական նշանակությունը

Ատենախոսության տեսական նշանակությունը պայմանավորված է երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի սոցիոլոգիական մեկնաբանության շրջանակի ընդլայնմամբ սոցիալական կապիտալի տեսության համատեքստում: Աշխատանքը նպաստում է մանկության սոցիոլոգիայի, ընտանիքի սոցիոլոգիայի և սոցիալական կապիտալի տեսության միջև տեսական կապերի ձևավորմանը՝ երեխաների խնամազրկությունը մեկնաբանելով որպես սոցիալական հարաբերությունների և սոցիալական կապիտալի փոխներգործող գործընթաց: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս դուրս գալ խնամազրկության իրավական և վարչական մեկնաբանությունների սահմաններից և այն դիտարկել որպես բազմագործոն սոցիալական գործընթաց՝ պայմանավորված ընտանեկան, համայնքային և ինստիտուցիոնալ հարաբերություններով և երեխայի՝ սոցիալական կապիտալ ձևավորելու կարողությամբ:

Աշխատանքի շրջանակում խնամազրկությունը մեկնաբանվում է ոչ թե որպես մեկանգամյա իրադարձություն կամ արդեն ձևավորված սոցիալական կարգավիճակ, այլ որպես փոփոխություններով պայմանավորված և ժամանակի ընթացքում

զարգացող գործընթաց, որտեղ քննարկման ենթակա նշանակալի հանգամանքներ են երեխայի համար նշանակալի սոցիալական հարաբերությունների, սոցիալական աջակցության համակարգերի և սոցիալական կապիտալի հասանելիությունը:

Ատենախոսության շրջանակում մշակված հասկացությունները՝ «անտեսանելի ծնող», «դե ֆակտո» խնամազրկություն, «միջանցքում հայտնված երեխաներ», ինչպես նաև սոցիալական կապերի թուլացման, խաթարման (դեֆորմացիայի), քայքայման և խզման՝ որպես խնամազրկության գործընթացի առանձին փուլերի բնութագրիչների սահմանում, ընդլայնում են երեխաների խնամազրկության ուսումնասիրման հասկացութային գործիքակազմը և կարող են կիրառվել հետագա տեսական և էմպիրիկ հետազոտություններում:

Աշխատանքի տեսական կարևոր արդյունքներից է նաև խնամազրկության գործընթացում սոցիալական կապիտալի տարբեր տեսակների՝ ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի, համակցված դիտարկումը: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալական կապիտալը խնամազրկության համատեքստում կարող է հանդես գալ ոչ միայն որպես պաշտպանող ռեսուրս, այլ նաև որպես խնամազրկության գործընթացի վերահսկող և բացառող գործոն, հանգամանք, որ թույլ կտա սոցիալական կապիտալի տեսության զարգացումը երեխաների պաշտպանության և խնամքի ոլորտում:

Այսպիսով, ատենախոսությունը նպաստում է երեխաների ընտանեկան խնամքից զրկման երևույթի սոցիոլոգիական մեկնաբանության խորացմանը և ձևավորում տեսական հիմքեր խնամազրկության՝ սոցիալական կապիտալի վրա հիմնված մոտեցումների համատեքստում որպես գործընթացի ուսումնասիրմանը, հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը

Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի առավել վաղ բացահայտման, խնամազրկության ռիսկերի նույնականացման և կանխարգելման համար կիրառական մոդելի գիտական հիմքերի ձևավորմամբ:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել երեխաների պաշտպանության պետական քաղաքականության, խնամքի ծառայությունների ապաինստիտուտավորման ծրագրերի և երեխաների ընտանիքահեն խնամքի այլընտրանքային տարբերակների զարգացման ռազմավարությունների մշակման, ինչպես նաև երեխաների պաշտպանության համակարգի կատարելագործման աշխատանքներում: Ատենախոսության շրջանակում ներկայացված մոտեցումները

հնարավորություն են տալիս խնամազրկությունը դիտարկել որպես կանխարգելման ենթակա սոցիալական գործընթաց, որի վաղ փուլերի բացահայտումը կարող է ապահովել երեխաների համար ընտանեկան միջավայրի պահպանումը կամ ընտանեկան խնամքի այլ տարբերակով արդյունավետ և ժամանակին փոխարինումը:

Գործնական նշանակություն ունի նաև աշխատանքի շրջանակում մշակված խնամազրկության դասակարգման մոդելը, որը կարող է կիրառվել երեխաների պաշտպանության, սոցիալական աշխատանքի և սոցիալական ծառայությունների կազմակերպման և տրամադրման գործընթացներում: Առաջարկվող չափումները հնարավորություն են տալիս համապարփակ գնահատել երեխայի սոցիալական իրավիճակը, բացահայտել խնամազրկության ռիսկերը և պլանավորել հնարավոր հասցեական միջամտություններ:

Ի լրումն, հետազոտության արդյունքները կարող են կիրառվել սոցիալական աշխատողների, հոգեբանների, սոցիալական մանկավարժների, խնամատար և այլ փոխարինող ծնողների, ինչպես նաև երեխաների պաշտպանության ոլորտի այլ մասնագետների վերապատրաստման և մասնագիտական կրթության գործընթացներում: Մասնավորապես, աշխատանքի շրջանակում մշակված հասկացությունները և վերլուծական մոտեցումները կարող են նպաստել խնամքի թերացումների, լատենտ խնամազրկության, անտեսանելի ծնողության և սոցիալական կապերի խաթարման դասակարգման համար նոր գործիքակազմի մշակմանը:

Գործնական արժեք ունեն նաև հետազոտության ընթացքում ձևավորված եզրահանգումները սոցիալական կապիտալի տարբեր մակարդակների վերաբերյալ: Դրանք հնարավորություն են տալիս երեխաների պաշտպանության ծրագրերում առավել նպատակային օգտագործել ընտանիքի, համայնքի և երեխայի սոցիալական միջավայրի ռեսուրսները՝ խթանելով կանխարգելման, սոցիալական ներառման և վերաինտեգրման մեխանիզմների արդյունավետ ներդրում երեխային ուղղված սոցիալական քաղաքականության բովանդակության և մոտեցումների մեջ:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել նաև որպես տեսական և մեթոդաբանական հիմք երեխաների պաշտպանության, սոցիալական աշխատանքի, սոցիալական քաղաքականության և մանկության սոցիոլոգիայի ոլորտներում հետագա գիտական հետազոտությունների իրականացման համար:

Հետազոտական արդյունքների փորձարկումը

Աշխատանքում ներկայացված հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետում, Սոցիալական աշխատանքի բաժնում դասավանդվող «Երեխաների հետ սոցիալական աշխատանք» դասընթացի շրջանակում, ի լրումն ատենախոսության շրջանակում մշակված գաղափարները և ստացված արդյունքները ներկայացվել և քննարկվել են նաև մի շարք գիտաժողովների շրջանակում, մասնավորապես՝

- Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գիտական նստաշրջաններ, 2018, 2019,
- «Հանրային առողջության և սոցիալական գիտությունների դոկտորական ծրագրեր» միջազգային գիտաժողովում (Երևանի պետական բժշկական համալսարան, 12–13 սեպտեմբերի, 2022 թ.),
- «Ժողովրդավարության ճոճանակը. ինքնության ճգնաժամ և արժեքների փոխակերպում» միջազգային գիտաժողովում (Երևանի պետական համալսարան, 12–13 նոյեմբերի, 2024 թ.),
- «Սոցիալական համերաշխությունը՝ պետականության զարգացման հիմք» գիտաժողովում (Երևանի պետական համալսարանի ուսումնաարտադրական բազա, Ծաղկաձոր, 4–6 ապրիլի, 2025 թ.):

Ատենախոսության առանձին տեսական և էմպիրիկ արդյունքներ արտացոլվել են նաև հեղինակի թվով 6 գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Տեքստի ծավալը՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը և բովանդակությունը՝ 150 էջ:

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը և առարկան, հիմնական վարկածները, տեսամեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի փորձաքննությունը:

Առաջին՝ **«Երեխաների խնամազրկության ուսումնասիրման տեսամեթոդաբանական մոտեցումները»,** գլուխը նվիրված է երեխաների խնամազրկության հիմնախնդրի տեսական մեկնաբանություններին:

Գլխի առաջին՝ **«Երեխա» հասկացությունը սոցիոլոգիական հարացույցում,** ենթագլխում վերլուծվում են «երեխա» և «մանկություն» հասկացությունների սոցիոլոգիական մեկնաբանությունները: Քննարկվում են երեխայի վերաբերյալ կենսաբանական, հոգեբանական, իրավական և սոցիոլոգիական մոտեցումները, ինչպես նաև մանկության սոցիոլոգիայի ձևավորման հիմնական փուլերն ու ժամանակակից տեսական ուղղությունները (James & Prout, 2015; Jenks, 2020; Corsaro, 2018): Հատուկ ուշադրություն է դարձվում երեխայի սուբյեկտության հայեցակարգին և երեխայի՝ որպես սոցիալական հարաբերությունների ակտիվ մասնակցի ընկալմանը:

Երկրորդ՝ **«Երեխաների խնամքի և խնամազրկության սոցիոլոգիական մեկնաբանությունները»,** ենթագլխում ներկայացվում են երեխաների խնամքի և խնամազրկության վերաբերյալ ձևավորված հիմնական տեսական մոտեցումները: Վերլուծվում են խնամքի էթիկայի (Tronto, 1993), կապվածության տեսության (Bowlby, 1982), երեխայի զարգացման հոգեբանական և սոցիալականացման տեսությունների (Piaget, 1952; Kohlberg, 1981; Cooley, 1902; Vygotsky, 1978), ինչպես նաև սոցիալական վերահսկողության և ինստիտուցիոնալ կարգավորման վերաբերյալ մոտեցումների (Foucault, 1977) շրջանակում խնամքի և խնամազրկության մեկնաբանությունները: Հիմնավորվում է խնամազրկությունը որպես սոցիալական հարաբերությունների խաթարման գործընթաց դիտարկելու անհրաժեշտությունը:

Գլխի երրորդ ենթագլխում՝ **«Ծնողի դերի սոցիալական կառուցակցումը և դրա կապը երեխաների խնամքի և խնամազրկության ընկալումների հետ»,**

ուսումնասիրվում է «ծնողության» սոցիալական կառուցակցումը և դրա ազդեցությունը երեխաների խնամքի կազմակերպման ու խնամազրկության վերաբերյալ հասարակական պատկերացումների ձևավորման վրա: Ցույց է տրվում, որ ծնողությունը հանդես է գալիս ոչ միայն որպես կենսաբանական կամ իրավական կարգավիճակ, այլև որպես սոցիալական դեր, որի իրականացումը պայմանավորված է հասարակական նորմերով, սպասումներով և պատասխանատվության վերաբերյալ պատկերացումներով (Jenks, 2020; Archard, 2015):

Առաջին գլխի քննարկման հիման վրա ձևավորվում է այն տեսական շրջանակը, որի շուրջ համադրվում են մանկության սոցիոլոգիայի, երեխաների խնամքի և խնամազրկության սոցիոլոգիական մեկնաբանությունները, ինչպես նաև ծնողության սոցիալական կառուցակցման վերաբերյալ տեսական մոտեցումները: Գլուխը հնարավորություն է տալիս երեխաների ընտանեկան խնամքից զրկումը դիտարկել ոչ միայն որպես իրավական կարգավիճակ կամ սոցիալական խնդրի դրսևորում, այլ որպես սոցիալական հարաբերությունների, դերերի, նորմատիվ ակնկալիքների և սոցիալական պատասխանատվության համակարգում ձևավորվող գործընթաց: Մանկության սոցիոլոգիայի, խնամքի և խնամազրկության վերաբերյալ տեսական մոտեցումների համադրումը հիմք է ստեղծում երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի հետագա վերլուծության համար՝ կենտրոնացնելով ուշադրությունը երեխայի սուբյեկտության, սոցիալական հարաբերությունների և սոցիալական կապերի դերի վրա: Այս տեսական շրջանակը հետագայում հնարավորություն է տալիս սոցիալական կապիտալը կիրառել որպես վերլուծական գործիք և ուսումնասիրել ընտանեկան, համայնքային և ինստիտուցիոնալ հարաբերությունների դերը խնամազրկության ձևավորման, զարգացման և վերարտադրության գործընթացներում:

Երկրորդ՝ **«Սոցիալական կապիտալը որպես երեխաների խնամազրկության վերլուծական շրջանակ»,** գլուխը նվիրված է սոցիալական կապիտալի հայեցակարգի տեսական հիմքերի և երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի ուսումնասիրման մեջ դրա կիրառելիության վերլուծությանը:

Գլխի առաջին՝ **«Սոցիալական կապիտալի հայեցակարգի տեսական հիմքերը»,** ենթագլխում քննարկվում են սոցիալական կապիտալի տեսության ձևավորման հիմնական ուղղությունները՝ հիմնվելով Պ. Բուրդյեի (Bourdieu, 1986), Ջ. Քոլմանի (Coleman, 1988), Ռ. Փաթնամի (Putnam, 2000), ինչպես նաև սոցիալական կապիտալի հետագա զարգացմանը նվիրված ուսումնասիրությունների (Portes, 1998; Woolcock, 1998) վրա: Վերլուծվում են սոցիալական կապիտալի կառուցվածքային և գործառութային բնութագրիչները, սոցիալական կապերի, վստահության,

փոխադարձության նորմերի և սոցիալական աջակցության համակարգերի նշանակությունը անհատի և սոցիալական խմբերի կենսագործունեության կազմակերպման գործընթացներում: Միաժամանակ ներկայացվում են սոցիալական կապիտալի տեսության կիրառման հնարավորություններն ու սահմանափակումները սոցիալական հիմնախնդիրների ուսումնասիրման համատեքստում:

Գլխի երկրորդ՝ **«Սոցիալական կապիտալը՝ որպես երեխաների խնամքի և պաշտպանության ապահովման պայման և խնամազրկության մեկնաբանման ելակետ»,** ենթագլխում սոցիալական կապիտալի հայեցակարգը դիտարկվում է երեխաների խնամքի, պաշտպանության և բարեկեցության ապահովման տեսանկյունից: Վերլուծվում է ընտանիքի, համայնքի և սոցիալական միջավայրի դերակատարությունը երեխայի սոցիալական զարգացման, սոցիալական ներառման և անվտանգության ապահովման գործում՝ հենվելով մանկության սոցիոլոգիայի, սոցիալական կապիտալի և երեխաների պաշտպանության վերաբերյալ ժամանակակից ուսումնասիրությունների վրա (Coleman, 1988; Putnam, 2000; Qvortrup, 2005; Corsaro, 2018): Հիմնավորվում է, որ երեխայի համար հասանելի սոցիալական կապերը, սոցիալական աջակցության համակարգերը և վստահության վրա հիմնված հարաբերությունները հանդիսանում են խնամքի և պաշտպանության կարևոր ռեսուրսներ, իսկ դրանց թուլացումը կամ սահմանափակումը կարող է նպաստել խնամազրկության ռիսկերի ձևավորմանը:

Գլխում առաջադրվում է այն տեսական դիրքորոշումը, համաձայն որի՝ երեխաների ընտանեկան խնամքից զրկումը կարող է վերլուծվել սոցիալական կապիտալի տեսության շրջանակում՝ որպես սոցիալական կապերի և հարաբերությունների փոխակերպման գործընթաց: Այս համատեքստում առանձնացվում են սոցիալական կապիտալի երեք փոխկապակցված տիպերը՝ ընտանեկան սոցիալական կապիտալը, համայնքային սոցիալական կապիտալը և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալը, որոնք դիտարկվում են որպես երեխայի խնամքի, պաշտպանության և սոցիալական ինտեգրման տարբեր գործառույթներ իրականացնող ռեսուրսներ:

Երրորդ՝ **«Երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի և սոցիալական կապիտալի փոխառնչությունները հայաստանյան հասարակությունում»,** գլուխը ներկայացնում է հետազոտության էմպիրիկ մասը և նվիրված է երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի սոցիոլոգիական վերլուծությանը՝ սոցիալական կապիտալի տեսության շրջանակում (Bourdieu, 1986; Coleman, 1988; Putnam, 2000):

Գլխի առաջին ենթագլխում՝ **«Ընտանեկան խնամքից զրկված երեխաների սոցիալական կապիտալի ուսումնասիրման մեթոդաբանությունը»**, ներկայացվում

են հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերը, հետազոտական ռազմավարությունը, տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդները, ընտրանքի ձևավորման առանձնահատկությունները և հետազոտության իրականացման փուլերը: Հիմնավորվում է տվյալների հավաքագրման որակական և քանակական մեթոդների համադրման տրամաբանությունը՝ որպես խնամազրկության գործընթացի բազմաշերտ բնույթը բացահայտելու եղանակ (Charmaz, 2006; Թադևոսյան, 2006):

Գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Ընտանեկան խնամքից զրկումը՝ որպես երեխայի իրավական և սոցիալական կարգավիճակ. տեսական-հասկացութային վերլուծություն»**, իրականացվում է խնամազրկություն հասկացության տեսական վերաիմաստավորում: Հիմնավորվում է խնամազրկության՝ որպես սոցիալական գործընթացի և ընտանեկան խնամքից զրկված երեխայի՝ որպես սոցիալական կարգավիճակի տարբերակումը: Առաջարկվում է խնամազրկության դասակարգման մոդել, որը ներառում է դրա բացահայտ, լատենտ, քրոնիկ, ընտրողական, նորմատիվորեն լեգիտիմացված և ինստիտուցիոնալ ձևերը: Միաժամանակ գիտական շրջանառության մեջ են ներմուծվում «անտեսանելի ծնող», «դե ֆակտո խնամազրկություն» և «միջանցքում հայտնված երեխաներ» հասկացությունները, որոնք հնարավորություն են տալիս նկարագրել իրավական և վարչական գործող սահմանումներից դուրս մնացող խնամազրկության տարբերվող ձևաչափերի դրսևորումները:

Գլխի երրորդ՝ **«Ընտանեկան խնամքից զրկման շղթան. պատճառահետևանքային կապերի վերլուծություն»**, ենթագլխում բացահայտվում են խնամազրկության ձևավորման գործընթացային հիմնական ուղիները և դրանց հիմքում ընկած սոցիալական մեխանիզմները: Վերլուծության արդյունքում հիմնավորվում է, որ խնամազրկությունը ձևավորվում է ոչ թե մեկանգամյա իրադարձության, այլ սոցիալական ռիսկերի, ընտանեկան հարաբերությունների փոփոխությունների և սոցիալական կապիտալի աստիճանական թուլացման տևողության մեջ: Առաջարկվում է խնամող–խնամվող հարաբերությունների գործընթացային մոդել, որը ներառում է սոցիալական կապերի թուլացման, խաթարման, քայքայման և խզման փուլերը՝ որպես խնամազրկության ձևավորման փոխպայմանավորող աստիճաններ:

Գլխի չորրորդ՝ **«Ընտանեկան խնամքի թերացումները և ընտանեկան խնամքից զրկումը՝ որպես սոցիալական հիմնախնդիր հայաստանյան իրականությունում»**, ենթագլխում վերլուծվում են երեխաների խնամքի թերացումների և խնամազրկության տարբեր դրսևորումները հայաստանյան համատեքստում: Բացահայտվում են այն սոցիալական, ընտանեկան և

ինստիտուցիոնալ գործոնները, որոնք նպաստում են երեխաների ընտանեկան խնամքից զրկման գործընթացի ձևավորմանը, ինչպես նաև ներկայացվում են խնամազրկության այն լատենտ և ոչ ֆորմալ դրսևորումները, որոնք հաճախ դուրս են մնում երեխաների պաշտպանության համակարգի տեսադաշտից և վարչական գործող դասակարգումներից:

Գլխի հինգերորդ ենթագլխում՝ **«Սոցիալական կապիտալի տեսակների և ընտանեկան խնամքից զրկման գործընթացի բնութագրիչների միջև կապերը»**, ենթագլխում ներկայացվում են հետազոտության քանակական արդյունքները: Վերլուծվում են ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի կապերը խնամազրկության հիմքերի, բնույթի և գործընթացային ուղիների հետ: Արդյունքները ցույց են տալիս, որ ընտանեկան սոցիալական կապիտալը հանդես է գալիս որպես խնամազրկության գործընթացի առանցքային միջնորդող գործոն, մինչդեռ համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալը տեսականորեն կարող են ունենալ ինչպես պաշտպանող, այնպես էլ փոխհատուցող գործառույթներ: Բացի այդ, հիմնավորվում է սոցիալական ռիսկերի կուտակման և ընտանեկան սոցիալական կապիտալի թուլացման միջև նշանակալի կապի առկայությունը, ինչպես նաև բացահայտվում է երեխայի սուբյեկտայնության և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապիտալի միջև կապը:

Երրորդ գլխում իրականացված տեսական և էմպիրիկ վերլուծության արդյունքում հիմնավորվում է, որ երեխաների՝ ընտանեկան խնամքից զրկումը սոցիալական կապերի և սոցիալական կապիտալի փոխակերպմամբ պայմանավորված գործընթաց է: Բացահայտվում են այն սոցիալական մեխանիզմները, որոնց միջոցով սոցիալական ռիսկերը ներգործում են ընտանեկան հարաբերությունների և երեխայի սոցիալական միջավայրի վրա՝ նպաստելով խնամազրկության ձևավորմանը: Գլխի արդյունքները էմպիրիկ տեսանկյունից ոչ միայն ստուգում են հետազոտության տեսական դրույթները, այլ նաև ձևավորում են երեխաների խնամազրկության գործընթացային մեկնաբանության հիմքերը՝ ընդլայնելով դրա սոցիոլոգիական ըմբռնումն ու ստեղծելով կանխարգելմանն ուղղված առավել համակարգային մոտեցումներ մշակելու համար անհրաժեշտ նախադրյալներ:

Եզրակացություն և առաջարկություններ

Ատենախոսությունն ավարտվում է «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնով, որտեղ ամփոփվում են հետազոտության տեսական և էմպիրիկ հիմնական արդյունքները, ներկայացվում են երեխաների ընտանեկան

խնամքից զրկման գործընթացի վերաբերյալ ձևավորված տեսական ընդհանրացումները, ինչպես նաև երեխաների պաշտպանության համակարգի, խնամազրկության կանխարգելման և ընտանիքահեն միջամտությունների կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Մասնավորապես.

- Հետազոտությունը ցույց տվեց, որ երեխաների ընտանեկան խնամքից զրկումը նպատակահարմար է դիտարկել ոչ միայն որպես իրավական կարգավիճակ կամ երեխայի կյանքի առանձին իրադարձություն, այլ որպես ժամանակի ընթացքում ձևավորվող և զարգացող սոցիալական գործընթաց, որի հիմքում սոցիալական հարաբերությունների և սոցիալական կապիտալի փոփոխություններն են:
- Հետազոտության արդյունքում հիմնավորվեց խնամազրկության գործընթացային մեկնաբանությունը, որի շրջանակում սոցիալական կապերի թուլացման, խաթարման, քայքայման և խզման գործընթացները դիտարկվում են որպես խնամազրկության զարգացման փոխպայմանավորող փուլեր:
- Բացահայտվեց, որ ընտանեկան սոցիալական կապիտալը խնամազրկության գործընթացում ունի միջնորդող նշանակություն, և սոցիալական ռիսկերի ազդեցությունը հաճախ իրականացվում է ընտանեկան հարաբերությունների, փոխադարձ աջակցության, վստահության և սոցիալական վերահսկողության մեխանիզմների փոփոխության միջոցով:
- Էմպիրիկ տվյալները ցույց տվեցին, որ երեխաների խնամազրկությունը առավել հաճախ պայմանավորված է ոչ թե մեկ առանձին ռիսկային գործոնով, այլ սոցիալական ռիսկերի կուտակման և դրանց համակցված ազդեցության արդյունքում ձևավորվող խոցելիության սրացմամբ:
- Հիմնավորվեց, որ ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապերը տարբեր կերպ են ներգործում խնամազրկության գործընթացի վրա: Ընտանեկան սոցիալական կապիտալը հիմնականում պայմանավորում է խնամքի և պաշտպանության հնարավորությունները, համայնքային սոցիալական կապիտալը կարող է հանդես գալ ինչպես աջակցող, այնպես էլ որպես սահմանափակող ռեսուրս, իսկ երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապերը հաճախ ստանձնում են փոխհատուցող և ադապտացիոն գործառույթներ:
- Հաստատվեց, որ երեխաների կողմից ձևավորվող փոխարինող սոցիալական կապերը կարևոր դեր են կատարում սոցիալական ադապտացիայի և հարաբերությունների վերակազմավորման գործընթացում, սակայն չեն կարող ամբողջությամբ փոխարինել ընտանեկան սոցիալական կապիտալի դերին ու գործառույթներին:

- Հետազոտությունը ցույց տվեց, որ երեխաների պաշտպանության գործող համակարգերը հիմնականում արձագանքում են խնամազրկության արդեն տեսանելի դրսևորումներին, մինչդեռ հարաբերությունների աստիճանական թուլացման և լատենտ խնամազրկության ձևերը հաճախ մնում են չբացահայտված, ինչը սահմանափակում է կանխարգելման և վաղ միջամտության հնարավորությունները:
- Հիմնավորվեց, որ խնամազրկության գործընթացը կարող է ձևավորվել ոչ միայն ծնողի կամ խնամողի ֆիզիկական բացակայության, այլև հուզական ներգրավվածության նվազման, փոխադարձ վստահության թուլացման և հարաբերությունների շարունակականության խաթարման պայմաններում, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել խնամազրկության լատենտ ձևերը:
- Ըստ այդմ, գիտական շրջանառության մեջ ներմուծված «անտեսանելի ծնող», «դե ֆակտո խնամազրկություն» և «միջանցքում հայտնված երեխաներ» հասկացությունները հնարավորություն են տալիս բացահայտել խնամազրկության այն դրսևորումները, որոնք ամբողջությամբ չեն արտացոլվում գործող իրավական և վարչական դասակարգումներում:
- Հետազոտության արդյունքները վկայում են, որ երեխաների՝ ընտանեկան խնամքից զրկման երևույթի կանխարգելման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալ-տնտեսական աջակցության միջոցառումներով, այլև ընտանեկան, համայնքային և երեխայի կողմից ձևավորվող սոցիալական կապերի պահպանման և ամրապնդմանն ուղղված միջամտություններով:

Հավելվածներում ներկայացված են հետազոտության իրականացման և արդյունքների վերլուծության համար օգտագործված նյութերը, մասնավորապես՝ հետազոտական գործիքակազմը, դեպքերի ուսումնասիրության և տվյալների կոդավորման նյութերը, ընտրանքի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, ինչպես նաև քանակական վերլուծության մանրամասն արդյունքները: Հավելվածները ներառում են նաև սոցիալական կապիտալի տարբեր տեսակների, խնամազրկության գործընթացի բնութագրիչների, երեխայի սուբյեկտայնության, ընտանեկան համատեքստի և ռիսկի գործոնների միջև կապերը ներկայացնող վիճակագրական վերլուծությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Yuliana Melkumyan, Veronika Odinokova, Tatevik Karapetyan, Mira Antonyan, **Ethical and methodological barriers to child sexual abuse research in Armenia: Balancing protection, consent, and participation**, Children and Youth Services Review, 2026, 108952.
2. Tatevik Karapetyan, **Transformations in the Sociological Perceptions of Childhood**, Journal of Sociology. Bulletin of Yerevan University, 2025, 113-122.
3. Tatevik Karapetyan, **Restrictions of Establishing Social Bonds Among the Children Deprived from Parental Care (On the Case of Children Sheltered at the Crisis Centre)**, Journal of Yerevan University, Sociology, YSU, Yerevan, 2021, № 2 (34), pp. 46-54
4. Tatevik Karapetyan, **Qualitative measures of family functions affecting child deprivation**, "Katchar" Collection of Scientific Articles. International Scientific-Educational Center NAS RA, 2021 (1), Yerevan, pp. 151-169.
5. Տաթևիկ Կարապետյան, **Երեխաների խնամազրկության երևույթի տերմինաբանական խնդիրների շուրջ**. Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, 2019, 3(30), էջեր 79-87:
6. Տաթևիկ Կարապետյան, **Երեխաները սոցիալական կապիտալի ձևավորման գործընթացի օբյեկտ, թե սուբյեկտ**: Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն, 2018, էջեր 20–27:

Карапетян Татевик Завеновна

«СОЦИОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ СОЦИАЛЬНОГО КАПИТАЛА ДЕТЕЙ, ЛИШЕННЫХ СЕМЕЙНОЙ ОПЕКИ»

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 – «Методология социологических исследований, теории, социальные технологии и процессы».

Защита диссертации состоится 28 августа 2026 г. в 13:00 на заседании Специализированного совета Философии и социологии 013 КВОН РА, по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а, Ереванский государственный университет.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена социологическому анализу процесса лишения детей семейной опеки в армянском обществе с позиций теории социального капитала. Теоретико-методологическую основу исследования составили теоретические подходы социологии детства (James & Prout, 2015; Jenks, 2020; Corsaro, 2018) и теории социального капитала (Bourdieu, 1986; Coleman, 1988; Putnam, 2000).

Актуальность исследования обусловлена продолжающимися реформами системы защиты детей в Республике Армения, приоритетностью семейных форм воспитания и необходимостью выявления социальных механизмов, лежащих в основе лишения детей семейной опеки. Несмотря на значительный объем исследований, посвященных последствиям лишения семейной опеки, институциональному уходу, бедности и политике защиты детей, сравнительно мало внимания уделяется анализу лишения семейной опеки как социального процесса, рассматриваемого как результат трансформации социальных отношений и различных форм социального капитала ребенка и семьи.

Объектом исследования являются дети, лишенные семейной опеки. **Предметом исследования** являются роль, особенности функционирования и трансформации социального капитала в процессах возникновения, развития и воспроизводства лишения детей семейной опеки.

Цель исследования заключается в осуществлении социологического анализа процесса лишения детей семейной опеки в армянском обществе и выявлении роли семейного, общественного и формируемого самим ребенком социального капитала в механизмах формирования, развития и воспроизводства процесса лишения семейной опеки.

Исследование основано на конструктивистском эпистемологическом подходе и конструктивистской версии обоснованной теории К. Чармаз (Charmaz, 2006).

Исследовательская стратегия основана на методологии исследования случая (case study) и реализована посредством последовательного смешанного исследовательского дизайна (mixed methods), что позволило рассмотреть феномен лишения семейной опеки не как статичный правовой статус, а как развивающийся социальный процесс.

Эмпирическую базу исследования составили архивные материалы Центра защиты детей «Мардигян» Армянского фонда помощи, полуструктурированные интервью с ключевыми информантами, интервью с детьми, лишенными семейной опеки, а также количественная база данных, разработанная по результатам качественного этапа исследования. На качественном этапе был произведён анализ 239 случаев лишения детей семейной опеки, охватывающих 321 ребенка, а также проведены полуструктурированные интервью с 10 ключевыми информантами и 30 детьми, имеющими опыт утраты семейной опеки. Количественный этап основывался на подвыборке, сформированной из базы данных качественного исследования, и включал 153 случая и 246 детей. Анализ данных осуществлялся посредством открытого, осевого и выборочного кодирования, а также методов описательной и аналитической статистики в программном обеспечении JASP, включая критерий χ^2, коэффициент V Крамера, дисперсионный анализ (ANOVA) и непараметрический критерий Краскела–Уоллиса.

Научная новизна диссертации заключается в разработке социологической модели лишения детей семейной опеки как процесса трансформации социальных отношений и социального капитала. В работе предложена процессуальная концептуализация лишения семейной опеки, разграничивающая лишение семейной опеки как социальный процесс и ребенка, лишенного семейной опеки, как носителя определенного социального статуса.

Разработана классификационная модель лишения семейной опеки, включающая его явные, латентные, хронические, селективные, нормативно легитимированные и институциональные формы. В научный оборот введены авторские понятия «невидимый родитель», «де-факто лишение семейной опеки» и «дети, оказавшиеся в коридоре», позволяющие описывать формы лишения семейной опеки, недостаточно отраженные в существующих правовых и административных классификациях. Кроме того, обоснована медиирующая роль семейного социального капитала во взаимосвязи между социальными рисками и благополучием ребенка.

Результаты исследования свидетельствуют о том, что лишение семейной опеки не является следствием какого-либо одного фактора риска или исключительно физического отсутствия родителя. Данный процесс формируется в результате

накопления социальных рисков, последовательного ослабления, нарушения, разрушения и разрыва значимых социальных связей, а также трансформации доступного ребенку социального капитала.

Установлена статистически значимая корреляция семейного социального капитала с причинами, формами и процессуальными траекториями лишения семейной опеки. Продемонстрировано, что социальный капитал сообщества способен выполнять как защитные, так и исключающие функции, тогда как социальный капитал, формируемый самим ребенком, преимущественно выступает ресурсом адаптации и частичной компенсации дефицита семейных ресурсов, не заменяя при этом семейный социальный капитал.

Исследование позволило обосновать, что семейный социальный капитал выступает ключевым медиирующим механизмом, посредством которого социальные риски воздействуют на возможности ребенка получать необходимую заботу, защиту и поддержку в семейной среде. Установлено, что эффективность профилактики лишения детей семейной опеки определяется не только снижением отдельных социальных рисков, но и сохранением и укреплением значимых социальных связей ребенка в семье, сообществе и ближайшем социальном окружении.

Полученные результаты позволяют рассматривать лишение семейной опеки как процесс постепенной трансформации социальных отношений и различных форм социального капитала. Тем самым исследование вносит вклад в развитие социологии детства, социологии семьи и теории социального капитала, расширяя социологическое понимание механизмов формирования и воспроизводства процесса лишения семейной опеки.

Теоретические положения и эмпирические результаты исследования создают основу для дальнейшего изучения процессов лишения семейной опеки, а также могут быть использованы при совершенствовании системы защиты детей в Республике Армения, разработке моделей ранней профилактики и повышении эффективности технологий социальной работы с детьми и семьями.

Karapetyan Tatevik Zaven

"A SOCIOLOGICAL ANALYSIS OF SOCIAL CAPITAL AMONG CHILDREN DEPRIVED OF FAMILY CARE"

Dissertation submitted for recieveing academic degree of the candidate of sociology under the speciality 22.00.01 – "Methodology of sociological research, theories, social technologies and processes".

The public defence of the dissertation will take place on 28th of August, 2026, at 13:00 at the session of HESC "Philosophy and Sociology", Specialized Council 013 based in Yerevan State University.
Address: 52a Abovyan str., Yerevan, 0025, RA, YSU

SUMMARY

The dissertation presents a sociological analysis of the process of children's deprivation of family care in Armenian society through the lens of social capital theory. Its theoretical and methodological foundation draws upon the sociology of childhood (James & Prout, 2015; Jenks, 2020; Corsaro, 2018) and social capital theory (Bourdieu, 1986; Coleman, 1988; Putnam, 2000).

The study is situated within the context of the ongoing transformation of the child protection system in the Republic of Armenia, the growing emphasis on family-based care, and the need to identify the social mechanisms underlying children's deprivation of family care. Although a substantial body of research has examined the consequences of family care deprivation, institutional care, poverty, and child protection policies, comparatively little attention has been devoted to understanding deprivation of family care as a social process shaped by the transformation of social relationships and the social capital of children, families, and their immediate social environment.

The object of the study is children deprived of family care. The subject of the study is the role and transformation of social capital in the processes through which children become deprived of family care and in the subsequent development and reproduction of this process.

The aim of the study is to provide a sociological analysis of the process of children's deprivation of family care in Armenian society and to examine the role of family, community, and child-generated social capital in the mechanisms underlying the emergence, development, and reproduction of this process.

The study adopts a constructivist epistemological perspective and Charmaz's (2006) constructivist grounded theory approach. The research was designed as a case study employing a sequential mixed-methods design, enabling deprivation of family care to be conceptualized not as a static legal status but as a dynamic social process.

The empirical material comprises archival records from the Mardigyan Child Protection Center of the Fund for Armenian Relief, semi-structured interviews with key informants, interviews with children deprived of family care, and a quantitative database developed from the findings of the qualitative phase of the study. The qualitative phase included the analysis of 239 cases involving 321 children, together with interviews with 10 key informants and 30 children. The quantitative phase was based on a subsample drawn from the qualitative research database and included 153 cases involving 246 children. Data were analysed using open, axial, and selective coding procedures, together with descriptive and inferential statistical techniques implemented in JASP, including the χ^2 test, Cramer's V, analysis of variance (ANOVA), and the Kruskal–Wallis test.

The scientific novelty of the dissertation lies in the development of a sociological model conceptualising children's deprivation of family care as a process of transformation of social relationships and social capital. The study advances a process-oriented conceptualisation of deprivation of family care, distinguishing deprivation of family care as a social process from the status of a child deprived of family care.

The dissertation develops a classification model encompassing overt, latent, chronic, selective, normatively legitimised, and institutional forms of deprivation of family care. It also introduces the concepts of the "invisible parent," "de facto deprivation of family care," and "children in the corridor" to describe forms of deprivation that are insufficiently reflected in existing legal and administrative classifications. Furthermore, the study theoretically substantiates the mediating role of family social capital in the relationship between social risks and child well-being.

The findings indicate that deprivation of family care cannot be explained solely by a single risk factor or by the physical absence of a parent. Rather, it develops through the accumulation of social risks, the progressive weakening, disruption, deterioration, and rupture of significant social relationships, together with the transformation of the social capital available to the child.

A strong association was identified between family social capital and the causes, forms, and processual trajectories of deprivation of family care. Community social capital was found to perform both protective and exclusionary functions, whereas child-generated social capital primarily serves as a resource for adaptation and partial compensation for the loss of family resources, without replacing family social capital.

The findings further demonstrate that family social capital functions as a key mediating mechanism through which social risks influence children's opportunities to receive care, protection, and support within the family environment. Effective prevention of deprivation of family care was found to depend not only on reducing individual social risks but also on preserving and strengthening children's significant social relationships within the family, the community, and their immediate social environment.

The findings support an understanding of deprivation of family care as a process of gradual transformation of social relationships and social capital rather than as a static condition. In doing so, the study broadens the sociological understanding of deprivation of family care, contributes to the advancement of the sociology of childhood, the sociology of the family, and social capital theory, and provides both theoretical and practical foundations for strengthening the child protection system in the Republic of Armenia, developing early preventive interventions, and enhancing the effectiveness of social work practice with children and families.

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ